Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Լիլիա Շուշանյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Շվեյցարական Համադաշնություն, Ժնև, 2019թ. հոկտեմբերի 6-ից 9-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Միջկառավարական ֆորումի խորհուրդ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՄԱԿ-ի գլխամասում անցկացվող Միջկառավարական ֆորումի (IGF, Intergovernmental Forum on Mining, Minerals, Metals and Sustainable Development) տարեկան ընդհանուր հանդիպմանը, որն այս տարի հիմնականում կենտրոնացած էր փոփոխվող կլիմայական պայմաններում հանքարդյունաբերության թեմայի շուրջ:

Միջկառավարական ֆորումը ստեղծվել է 2002թ. Յոհանեսբուրգում Համաշխարհային կայուն զարգացման գագաթնաժողովի արդյունքում, որտեղ պատվիրակները, ընդունելով հանքարդյունաբերության և կայուն զարգացման հնարավորությունները ու մարտահրավերները, որոշել են քայլեր ձեռնարկել կայուն զարգացմանը նպաստող հանքարդյունաբերության ներուժը ցույց տալու համար: Միջկառավարական ֆորումն այսօր միավորում է շուրջ յոթ տասնյակ պետություն, ինչպես նաև արդյունաբերության, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ովքեր համատեղ քննարկում են կայուն զարգացմանը հանքարդյունաբերությունը ծառայեցնելու միջոցները և գործադրում համապատասխան ջանքեր: Ֆորումի հիմնական նպատակը կառավարություններին օժանդակելն է ռեսուրսների կառավարման և որոշումների կայացման հարցերում ներպետական գնահատումների, կարողությունների զարգացման և թիրախավորված տեխնիկական

աջակցության, ինչպես նաև ուղեցույցերի մշակման և լավագույն միջազգային փորձի փոխանակման նպատակով համաժողովների կազմակերպման միջոցով: Ֆորումի քարտուղարությունը 2015թվականից իրականացնում է Կայուն զարգացման միջազգային ինստիտուտը, իսկ հիմնական ֆինանսավորումը տրամադրում է Կանադայի կառավարությունը:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Ֆորումի ընթացքում քննարկվել են ոլորտի մի շարք արդիական և առաջնահերթ ուշադրություն պահանջող թեմաներ: Էական տեղ էր հատկացված կլիմայական փոփոխությունների թեմային, ընդ որում ներկայացված էր ոչ միայն հանքարդյունաբերության ոլորտի գործողությունները, որոնք կարող են ազդել այդ փոփոխությունների վրա, այլև թե ինչպիսի ռիսկեր և վնասներ է կլիմայի փոփոխությունը առաջացնում հենց ոլորտի համար:

Ընդհանուր քննարկում է ծավալվել բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման ուղեցույցի շուրջ՝ ըստ փուլերի նշելով այն հիմնական ասպեկտները, որոնց պետք է անդրադառնալ համապատասխան գնահատումն իրականացնելիս:

Քննարկվել են նաև վերականգնվող էներգետիկայի կիրառման խթանման, հանքերի փակման փուլի, պոչամբարների և մի շարք այլ թեմաներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Ֆորումի ընթացքում առանձնազրույց եմ ունեցել ՄՖ-ի տնօրեն պրն. Գ. Ռեդֆորդի և փոխտնօրեն պր. Մ. Բլիսի հետ՝ քննարկելով ֆորումի նպատակը և խնդիրները, աշխատանքների իրականացման ձևաչափը, անդամ պետություններին ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ նախկինում ունեցած հատվածական հարաբերությունները: Հանդիպման ընթացքում պարոնայք հայտնել են Հայաստանին՝ ՄՖ-ին անդամակցելու և համապատասխան հրավիր-առաջարկ ուղարկելու իրենց ցանկության մասին: Շնորհակալություն հայտնելով համագործակցության առաջարկի համար, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հրավերը ստանալուն պես հայկական կողմը կարձագանքի անդամակցության առաջարկին՝ հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպելով անհրաժեշտ ներքին քննարկումները:

Հանդիպում է կայացել նաև Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի Գործադիր տնօրեն պրն. Թոմ Բաթլերի հետ: Հանդիպման ընթացքում ողջունել եմ Խորհրդի ներգրավվածությունը պոչամբարների վերաբերյալ միջազգային ստանդարտ

մշակելու աշխատանքներում՝ կարևորելով այն որպես ոլորտում անվտանգության ապահովման առաջնային հարցերից մեկը: Պատրաստակամություն եմ հայտնել մեր ներդրումն ունենալ նախագծի պատրաստ լինելուն պես դիտարկումների և առաջարկությունների ներկայացման և շարունակական համագործակցություն հաստատելու միջոցով՝ գիտակցելով, որ ստանդարտի մշակումը, դրա իրականացման ինստիտուտների ստեղծումը և կիրարկումը երկարաժամկետ աշխատանք են պահանջելու:
Քննարկում է տեղի ունեցել նաև ՄՖ-ի Արդյունահանող ճյուղերի և հարկային հարցերով խորհրդատու Ալեքսանդրա Ռեդհեդի հետ, ով ներկայացրել է ֆորումի շրջանակներում իրականացված ծրագրերը անդամ պետություններում, նկարագրել, թե ինչպես են դրանք կառուցվում՝ ըստ յուրաքանչյուր պետության կարիքների: Ռեդհեդի հետ քննարկման արդյունքում վերհանվել է, որ անդամակցության դեպքում հնարավոր կլինի սկսել Հայաստանում հարկային թեմայով որոշակի ուսումնասիրություն իրականացնելու նախագծման աշխատանքներ:
Կլիմայի փոփոխության թեմայով պանելային քննարկման ժամանակ բարձրացրել եմ այն արդյունավետ տեխնոլոգիաների ցանկը/կիրառումը սահմանող ուսումնասիրության անհրաժեշտության հարցը, որոնք պետք է ընդունելի լինեն կառավարությունների համար և որոնք էապես կնպաստեն ոլորտի կողմից կլիմայի փոփոխության վրա բացասական ազդեցության նվազեցմանը, օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը: Խոսնակները հայտնեցին, որ տեխնոլոգիաների վերաբերյալ առանձին ուսումնասիրություն այս պահին առկա չէ, բայց առաջիկայում ֆորումը կդիտարկի նման ուսումնասիրություն նախաձեռնելու հարցը:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը, չլինելով Միջկառավարական ֆորումի անդամ պետություն, հանդես էր գալիս դիտորդի կարգավիճակով և առանց քվեարկության իրավունքի: Ֆորումի ընթացքում անդամ պետությունները քվեարկությամբ պետք է ընտրեին ՄՖ-ի Գործադիր կոմիտեի անդամներ (նախագահ և հինգ տեղակալներ), ինչպես նաև՝ նախապատվություն տային շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ուղղությամբ առաջարկված երեք այլընտրանքային թեմաներից մեկին (Շրջակա միջավայրի կառավարում, Ջրերի կառավարում կամ Կլիմայի փոփոխություն)՝ հետագայում ուղեցույցի մշակման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Մշակվելիք ուղեցույցը հասանելի է լինելու բոլոր երկրներին՝ անկախ անդամակցությունից:
Գործուղման արդյունքում Գործադիր կոմիտեի անդամների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ Հայաստանի Հանրապետությունը կստանա Միջկառավարական

ֆորումին անդամակցելու իրավեր և համապատասխան փաթեթ՝ առաջարկությունը քննարկելու նպատակով:

Լիլիա Շուշանյան

X _____

11.10.2019թ.